Կոմիտաս

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1983



Հակոբ Կոջոյան
АКОП КОДЖОЯН
HAKOB KOJOYAN

ԳՄԴ 85. 143 (Լ<) 7
Կ 739

Կազմող և առաջաբանի հեղինակ՝
Բ. ԶՈՒՐԱԲՈՎ

Автор вступительной статьи и составитель
Б. ЗУРАБОВ

Introduced and compiled by
B.ZURABOV

Գրախոս՝ արվեստաբանության թեկնածու
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ 4903020000 (1017) / 705 (01) 83 221, 83—«Տ»

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1983
© Издательство «Советакан грох», 1983
© «Sovetakan Grogh» Publishers, 1983

Ձեռըս երթայ, դառնա ի հող,
Գիրըս մնա հիշատակող:

Հայ միջնադարյան ձեռագրից

I

Հակոբ Կոջոյանի արվեստ: Այդ արվեստը նկարչի կենդանի երևակայության և գեղեցիկի խոր զգացման ծնունդն է: Այդ արվեստում առկա է անկրկնելիության ճշմարիտ ուժը, որի կնիքը միշտ զգացվում է վարպետի ստեղծագործության վրա: Գունանկարը, գրաֆիկան, կիրառական արվեստը, ստեղծագործական որոնումների ողջ բազմազանությամբ հրապուրել են Կոջոյանին անփոփոխ և մշտապես: Նա նկարում էր յուղաներկով ու տեմպերայով, ջրաներկով ու գուաշով, տուշով ու մատիտով, նրան հետաքրքրում էին փորագրությունն ու մեցոտինտոն:

Հակոբ Կոջոյանի կերպարների աշխարհը կենդանություն է առնում Հայաստանի պետական պատկերասրահում, նկարչի դահլիճում. հրեղեն Քուռկիկ Ջալալիին հեծած սուրացող Սասունցի Դավիթը, կախարդական վրձնով շնչավորված «Հայկական բլբուլի» պոեզիան, խստաշունչ ու հին Հայաստան երկրի բնապատկերները՝ Գեղարդի քարե սիմֆոնիան, ձյունապսակ Արարատլեգենդը...

Կոջոյանը քաջատեղյակ էր Արևմտյան Եվրոպայի գեղարվեստական մշակույթին, Արևելքի կյանքին ու արվեստին, ռուս մինչհեղափոխական գեղանկարչությանն ու գրաֆիկային, սակայն նրա ստեղծագործությունը մշտապես պահպանեց վառ արտահայտված ազգային բնույթը: Այդ ստեղծագործությունը սերտորեն կապված է Հայաստանի գեղարվեստական մշակույթի ակունքների ու ավանդույթների հետ և, միաժամանակ, նոր ժամանակների արվեստի պատմության էջեր է բացում:

Հաստոցային և գրքի գրաֆիկայի ասպարեզում վարպետի գեղարվեստական կուլտուրան, նկարազարդողի նուրբ կատարելությունը, նրա աշխատանքը ետհեղափոխական շրջանի հայկական գրքի առաջին հրատարակությունների վրա թույլ են տալիս Կոջոյանին համարել հայ սովետական գրաֆիկայի հիմնադիրը:

Հակոբ Կոջոյանի արվեստը գլխավոր տեղերից մեկն է գրավում Սովետական Հայաստանի գեղարվեստական տարեգրության մեջ: Թումանյանի, Չարենցի, Սպենդիարյանի և Սարյանի հետ մեկտեղ, Կոջոյանն էլ պատկանում է մեր ժամանակների հայ մշակույթի գործիչների առաջին բույլքին, որ կանգնած էր նրա վարգացման ակունքների մոտ:

Հակոբ Կոջոյանը ծնվել է 1883 թվականին Ախալցխա քաղաքում, ոսկերչի ընտանիքում: Ապագա նկարչի մանկության տարիներն անցել են Վլադիկավկազում (այժմ՝ Օրջոնիկիձե): Այստեղ նա ուսանում է քաղաքային վարժարանում և միաժամանակ աշխատում հոր արհեստանոցում՝ ոսկերչություն, փորագրման և դրվագման արվեստ սովորելով ավագ եղբայրներից: Վլադիկավկազում ապրելու շրջանում Կոջոյանը մտերմանում է ապագա սովետական նշանավոր գեղանկարիչ Մախարբեկ Տուգանովի հետ: Տուգանովը, որ Կոջոյանից մեծ էր մի քանի տարով, սկսում է պարապել, օգնել նրան գունանկարի տեխնիկայի յուրացման ասպարեզում: Կոջոյանն իր անդրանիկ՝ «Ոսկերիչ վարպետներ» գունանկարչական էտյուդն արել է 1898-ին:

Տասնվեցամյա Հակոբը մեկնում է Մոսկվա և սովորում փորագրիչ Պրուսովի արվեստանոցում: Այնուհետև, Տուգանովի խորհրդով, Կոջոյանը որոշում է գեղարվեստական մասնագիտական կրթություն ստանալ Մյունխենում:

Այդ ժամանակ Մյունխենը, Փարիզի հետ մեկտեղ, Եվրոպայի մշակութային առաջատար կենտրոններից էր: Այդ քաղաքը նկարիչների համար հետաքրքրություն էր ներկայացնում Գլիպտոտեկայի, Հին պինակոտեկայի և գեղարվեստի ակադեմիայի հարուստ հավաքածուների շնորհիվ: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Մյունխենում են իրենց ուսումնառությունն անցկացրել Ի. Գրաբարը, Դ. Կարդովսկին, Մ. Դոբուժինսկին, Վ. Ֆավորսկին, հայ նկարիչներից՝ Վ. Սուրենյանցը (80-ական թվականներ) և Հ. Հակոբյանը (90-ական թվականներ):

Մյունխենում իննսունականների սկզբին Հակոբ Կոջոյանն ընդունվեց նկարիչ Անտոն Աշբեի ստուդիան: Ռուս հայտնի գրաֆիկ Մ. Դոբուժինսկին իր հուշերում թողել է Աշբեի կենդանի ու հետաքրքիր դիմանկարը՝ դպրոցի նկարագրության հետ մեկտեղ.

«...Աշբեն համարյա ամեն օր այցելում էր դպրոց: Նա իսկական հեքիաթային թզուկ էր՝ խոշոր գլխով, ճակատին ընկած գանգուր մազափնջով, խռիվ բեղերով... Մանկավարժ Աշբեն շատ հմուտ էր: Աշբեն սովորեցնում էր լուսաստվերը գլխի գծանկարի վրա տեղաբաշխել գնդի վրա ստվերների և ռեֆլեքսների տեղաբաշխմանը համապատասխան... Ես հիշում եմ դպրոցում աշակերտներից մի քանիսի աշխատանքները, ովքեր նկարում էին միայն ուղիղ գծերով, ապագա կուբիստական գծանկարների նման: «Աշբեի սիստեմում» ամենաարժեքավորը ձևի ընդհանրացումն ու պարզեցումն էր, որ ինչպես բոլոր սկսնակների, այնպես էլ ինձ համար իսկապես նոր ու թարմ խոսք էր»:

Սակայն Աշբեի մեթոդը նաև որոշակի սահմանափակություններ ուներ իր մեջ, որ ժամանակի ընթացքում ի հայտ եկան ինչպես գծանկարի, այնպես էլ գունանկարի համակարգում. վերջինս «գունազեղ էր ու թանձր» և, ըստ Դոբուժինսկու «չուրկ ամենագլխավորից՝ տոնից... Ես նկատեցի, որ նրանք, ովքեր շատ վաղուց էին պարապում Աշբեի մոտ, նմանվել էին իրար ու ընկել շաբլոնի մեջ»[1]:

Գերմանիայում ուսանելու տարիները նպաստեցին այն բանին, որ Կոջոյանը ծանոթացավ հին վարպետների գունանկարչությանն ու գեղարվեստական նոր հոսանքներին: Կոջոյանը հատուկ հետաքրքրություն էր ցուցաբերում Դյուրերի ստեղծագործության հանդեպ՝ ուսումնասիրելով նրա փորագրությունները, ինչպես նաև Հոլբեյնի և Կրանախի նկարչական ժառանգության նկատմամբ:

Շուտով Կոջոյանն ընդունվում է Մյունխենի գեղարվեստի ակադեմիան, որը 1907-ին ավարտելուց հետո մեկնում է Փարիզ և երկու տարի մնում այնտեղ: Ռուսաստան վերադառնալով, նկարիչն ապրում է Մոսկվայում՝ հիմնականում զբաղվելով հաստոցային գեղանկարչությամբ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կոջոյանը զորակոչվում է բանակ և հնարավորություն չի ունենում զբաղվելու գեղարվեստական ստեղծագործությամբ:

Կոջոյանի վաղ շրջանի աշխատանքները գրեթե չեն պահպանվել, բացառություն են կազմում «Նկարիչ Դուբախի դիմանկարը», 1907-ի «Ինքնադիմանկարը», նկարչի մորը պատկերող մատիտանկարը, որ արտահայտչորեն հաղորդում է հարազատ մարդու դիմագծերն ու հագուստի մանրամասները: Բայց դրանք ավելի շուտ էտյուդային փորձեր են, որոնք, բնականաբար, պատկերացում չեն տալիս այդ տարիների նրա արվեստի բնույթի մասին: Կոջոյանի ուղին արվեստում իր հետևողական զարգացմամբ ու ամբողջականությամբ ակներև է դառնում սոսկ 1918 թվականից, այն ժամանակվանից, երբ նա գալիս է Հայաստան:

1918-ին Կոջոյանը Ն. Մառի հնագիտական արշավախմբի հետ եղավ Անիում: Հայաստանի միջնադարյան մայրաքաղաքն իր ավերակներով, անց-

[1] **А. Моров.** М. В. Добужинский вспоминает... Сборник «Панорама искусств», М., 1979, стр. 156—157.

յալում նշանավոր և այժմ մասնակիորեն պահպանված պալատներով և եկեղեցական շինություններով, որմնանկարային գեղանկարչության բեկոր-նմուշներով հափշտակեց նկարչին, բորբոքեց նրա երևակայությունը: Տեղում արված ջրանկար էտյուդներն ու ճեպանկարները հետագայում ընկան «Անիի ավերակները» նկարի հիմքում (1919 թ.): Կապույտ ֆոնի վրա դարչնագույն տոներով պատկերված են ամրոցի պարիսպներն ու պալատի ավերակները՝ ցայտուն եզրագծերով: Խստաշունչ պարզությունն ու էպիկական ուժը հուզական խոր հնչողություն են հաղորդում այս ոչ մեծածավալ աշխատանքին: Միաժամանակ Կոջոյանի բնանկարը, որ պատկերման բնույթով վավերական չէ, պատմական է իր փիլիսոփայական-գեղարվեստական իմաստավորմամբ: Այստեղ տիրապետողը նկարչի խոհերն են ստեղծագործական մեծ ժառանգության շուրջ, պատմական ողբերգություն ապրած հայ ժողովրդի ճակատագրի շուրջ: Հետագա տարիներին թե գունանկարում և թե գրաֆիկայում Կոջոյանը վերստին անդրադարձավ Անիի թեմային: 1925-ին այս թեմայով արված նկարներից մեկը պահպանվում է Ռուսական թանգարանի հավաքածուում:

Քսանական թվականների սկզբին Կոջոյանը մոտ երկու տարի ապրեց Իրանում՝ Թավրիզում: Նրա հայացքի դեմ հառնում էին Երկնագույն մզկիթի ավերակները, Ալիշահի ամրոցի պարիսպները, երկնի կապույտի մեջ մխրճված մինարեները: Արևելյան քաղաքի կյանքն էր նրա առջև՝ նեղլիկ փողոցների եռուզեռով, ուր բազմալեզու ամբոխի մեջ հայտնվում էին չադրայով կանայք, հանդիսավոր ճեմող սպիտակ չալմայով մոլլաներ, դերվիշներ, ուր օդը լի էր կրընգոտ ալմուկով՝ գոյացած առևտրականների ծիծաղից, հայհոյանքներից ու կանչերից: Նկարչի տպավորություններն իրենց արտացոլումը գտան «Փողոց Թավրիզում» և «Ճաշարան Թավրիզում» ժանրային կտավներում: Կոջոյանի ներկայացրած կերպարներից յուրաքանչյուրը սուր զգացված է բնավորությամբ, արտաքին նկարագրով, շարժուձևով: Եվ, միաժամանակ, նկարիչը պատկերվածի մեջ գրոտեսկի տարրեր է ներմուծում, որոնք կտավներին որոշ պայմանականություն են հաղորդում: Այս շրջանում Կոջոյանն աշխատում էր առավելապես տեմպերայով: «Ճաշարան Թավրիզում» նկարում գունային գամման փոքրինչ մեղմված է, կառուցված մոխրավուն-կապույտ երանգների զուգորդումով: «Փողոց Թավրիզում» կտավում գույնն ավելի գործուն դեր է խաղում. այն կարմրավուն, նարնջագույն հարթությունների հնչողության մեջ է, կապույտով ու սպիտակով արված մանրամասների մեջ: Գույնն այստեղ առավել շարժուն է իր փոխներգործությամբ, սակայն պահպանում է տեմպերայի տեխնիկային հատուկ՝ հնչողության մեղմված բնույթը: Թավրիզյան նկարներում ի հայտ եկավ Կոջոյանի կոմպոզիցիոն վարպետությունը ևս. վերջինս արտահայտվում է միասնական գործողությամբ ի մի բերված՝ փողոցի տարածության լուծման և մարդկանց շարժումների բնույթի մեջ, ինտերյերի խորքի հաղորդման և զույգ տրամախաչվող առանցքների ծայրերին տեղադրված չորս ֆիգուրներով տեսողական դաշտի կոնֆիգուրացիայի կառուցման մեջ:

Իրանում ապրելու շրջանում Կոջոյանը ստեղծեց նաև մի քանի փոքրածավալ նկարներ՝ «Թավրիզի երեխաները», «Պարսկական շուկա», «Պարսկուհի», «Թավրիզի շները»: Այս բոլոր կտավները կապված են իրար հետ գեղարվեստական ընկալման ընդհանրությամբ՝ ինչպես կերպարային սկզբունքի, այնպես էլ գունանկարային տարածության մտածողության ձևի իմաստով, ոճի այն ներքին զգացողությամբ, որ բնորոշ է Կոջոյանի այդ տարիների գործերին:

1922 թվականին, Սովետական Հայաստանի կառավարության հրավերով, նկարիչը վերադարձավ Երևան և սկսեց մասնակցել երիտասարդ հանրապետության մշակույթի կառուցման գործին:

Կոջոյանի քսանական թվականների արվեստն աչքի է ընկնում բացառիկ բազմակողմանիությամբ: Նա շարունակեց զբաղվել հաստոցային գրաֆիկայով, սկսեց աշխատել սովետական առաջին հանդեսների և գրքերի ձևավորման վրա, դիմել փայտափորագրության տեխնիկային: Բնանկարային ժանրի գունա-

նկարչական կտավների հետ մեկտեղ, Կոջոյանն այդ շրջանում անցավ պատմա-հեղափոխական թեմայի մշակմանը:

Պրոֆեսիոնալ բարձր վարպետությամբ են հատկանշվում քսանական թվականներին Կոջոյանի արած գրաֆիկական աշխատանքները: Այդ շրջանի լավագույն և բարդ գործերից է «Սասունցի Դավիթ» գրաֆիկական կոմպոզիցիան: Հայ ժողովրդական էպոսը Կոջոյանի համար, նրա ողջ ստեղծագործական կյանքում մնաց իբրև բանաստեղծական մեծ բովանդակություն ունեցող անգերազանցելի հուշարձան: Էպոսի լեզուն, նրա կերպարային աշխարհը, օտար նվաճողների լծից ազատագրվելու համար ժողովրդի արդարացի պայքարի բուն գաղափարը խորապես հոգեհարազատ էին Կոջոյանին և նկարչական մարմնավորման ասպարեզում անսահման հնարավորություններ էին բացում նրա առջև:

Կոմպոզիցիայի կենտրոնում Սասունցի Դավթի ֆիգուրն է Քուռկիկ Ջալալիի վրա, Թուր-Կեծակին ձեռքին: Շուրջը զետեղված են էպոսի երրորդ ճյուղի թեմաներով նկարազարդումները՝ գառնարած Դավթի մանկությունը, Կոզբադինին պատժելու տեսարանը, հաշվեհարդարը Մսրա Մելիքի հետ: Թերթի ներքին տարածությունն ամփոփված է մանրանկարային գրաֆիկական պատկերների երկրորդ շարքի մեջ, որ ասես էպոսի ժամանակային ֆոնն են կազմում՝ Սասնա ամրոցի պարիսպները, Մարութա վանքը, առանձին հերոսների կերպարներն ու դրվագավոր գլխազարդեր: Դրանք արված են պաստոզային մեղմ գամմայով, այնինչ պատկերների հիմնական գոտում արտահայտչորեն ու ցայտուն է ներկայացված յուրաքանչյուր մանրամասը:

Կոջոյանի «Սասունցի Դավիթն» աչքի է ընկնում համակարգի գեղարվեստական ամբողջականությամբ: Ակվարելային հստակ ուրվանկարը զուգորդվում է ներքին գծային ռիթմի հետ, որ միավորում է թերթի բոլոր մասերը:

Գծանկարի գեղեցկությունն ու գունային անցումների ներդաշնակությունն իրենց վառ արտահայտությունն են գտել Կոջոյանի մի ուրիշ աշխատանքում ևս՝ «Ախալցխացի կանայք» գրաֆիկական գործում: Ծաղիկներից, վարդակներից, հեքիաթային պտուղներով ծառի ճյուղերից կազմված գորգ-զարդանկարի ֆոնի վրա պատկերված են ազգային տարազով կանանց ֆիգուրներ: Թերթի գունային գամման կառուցված է մուգ թավ սաղարթի և ճերմակ ժանյակների, կանացի զգեստների դարչնագույն ու վարդագույն տոների մեղմ նրբերանգների համահնչունության վրա: Նկարիչը հատուկ խնամքով է պատկերել հագուստների մանրամասները, ոսկերչական զարդեղենը, մեծ ճաշակով է մշակել ֆոնը, ուր յուրաքանչյուր վարդակ անկրկնելի է իր զարդանախշով:

Կոջոյանի այդ շրջանի «Հայկական մունետիկ», «Քնած պարսկուհին», «Հայկական ոճավորում» գրաֆիկական գործերում առկա են հեքիաթայնության տարրեր ինչպես կերպարների և սյուժեների մատուցման, այնպես էլ պատկերային արտահայտման մեջ՝ զարդադրվագների առատ օգտագործում, մանրամասների նրբին հղկվածություն, գծերի երաժշտական հնչողություն:

1925-ին Կոջոյանը նկարազարդեց Ստեփան Զորյանի «Հազարան բլբուլ» հեքիաթը: Ժողովրդական ստեղծագործությունը, հեքիաթի աշխարհը նկարչին հրապուրում էին իրենց պոեզիայով ու իմաստնությամբ, կենսական ուժով ու ֆանտազիայով: «Հազարան բլբուլի» նկարազարդումներում Կոջոյանը հարազատորեն ու ստույգ հաղորդեց հեքիաթի բուն ոգին և նրան համահունչ ձև գտավ: Ակվարելային նրբին տեխնիկայով են պատկերված սպիտակ նժույգի վրա, նետերի պրկված աղեղներով ու կեռ դաշույններով ռազմիկների գլուխն անցած, սուրող-թռչող թագավորը, լեռան լանջին վերջին շնչում գալար-գալար եկած, սև կծիկ դարձած վիշապը, այգում, հրաշալի ճերմակ ծաղիկների մեջ դայլայլող Հազարան բլբուլը... Նկարիչը հեքիաթային կերպարներին անդրադարձավ նաև հետագա տարիներին՝ հաստոցային և գրքի գրաֆիկայում, կիրառական արվեստի գործերի համար արված էսքիզներում:

Կոջոյանը ձևավորեց նաև մեզանում անդրանիկ մանկական պատկերազարդ հրատարակությունները՝ Հ. Թումանյանի «Գիքորը» և «Տերն ու ծառան»:

Կարապետ Կոջոյանը որդիների հետ. Վլադիկավկազ (այժմ՝ Օրջոնիկիձե), ոսկերչական արհեստանոց, 1890-ական թթ.

Карапет Коджоян с сыновьями. Владикавказ (ныне Орджоникидзе), ювелирная мастерская, 1890-е годы.

Karapet Kojoyan with his sons. Vladikavkaz (now Ordjonikidze). Jeweller's workshop. 1890-s.

Փոքրիկ գեղջուկ տղայի՝ Գիքորի տխուր ճակատագրի մասին պատմող թումանյանական հանրածանոթ պատմվածքն ավելի մոտ ու հասկանալի դարձավ մանուկներին այդ ձևավորման շնորհիվ: Գրքույկի յուրաքանչյուր մասը բացվում է սյուժետային-պատկերային գլխազարդով՝ տեսարաններ խանութում, հիվանդանոցում, գերեզմանատանը: Տուշով արված այդ գլխազարդերը բնույթով պատմողական են: Գրքույկի շապիկի վրա նկարիչն օգտագործել է պայմանական պլան՝ խորագիրը կրող սպիտակ ուղղանկյուն տարածքը ներփակելով մանուկների կենդանի դեմքերից կազմված շրջանակի մեջ: Կոջոյանի աշխատանքը մանկական գրքի վրա ի հայտ բերեց նրա գեղարվեստական հիմնական սկզբունքը՝ մատուցման հուպականության և պատկերի կյանքային հավաստիության զուգորդում:

Քսանական թվականներին, Հայաստան գալուց անմիջապես հետո, բնանկարը հիմնական ժանրերից մեկը դարձավ Կոջոյանի գեղանկարչության մեջ:

Այս շրջանում նրա ստեղծած «Միայնակ կաղնի. Կիրովական», «Կիրովականի լեռները», «Ապարան գյուղը» նկարներում գերիշխում է բաց դարչնագույն-մոխրագույնի, մանուշակագույնի, դեղնականաչի մեղմված տոնայնությունը: Վրձնի գունանկարային դրվածքն աչքի է ընկնում իմպուլսիվ բնույթով: Նույն ժամանակում արված գեղարդյան բնանկարների տեմպերային շարքում տիրապետողը գունային զուսպ գամման է: Ժայռակատարները, քարանձավները, միջնադարյան վանքի պատերն աչքի են զարնում իրենց ցայտունությամբ՝ բնության ավազագույն-դեղնականաչ ֆոնի վրա:

Քսանական թվականներին Կոջոյանի ստեղծած ամենաբանաստեղծական նկարներից մեկը «Աշունը Երևանում» կտավն է: Մենավոր ծառը, թափվող տերևների ոսկին, քարե ցանկապատի գորշ մակերեսը նկարիչը պատկերել է կոլորիտի նուրբ զգացողությամբ և խոր քնարականությամբ:

Սովետական առաջին տասնամյակը հայ կերպարվեստում նոր թեմաների և կերպարների սկզբնավորման պատմաշրջան դարձավ: Այդ թեմաներն ու կերպարներն իրենց մարմնավորումը գտան ինչպես Հակոբ Կոջոյանի արվեստում, այնպես էլ նրա ժամանակակիցների՝ Մ. Սարյանի, Ս. Առաքելյանի, Ս. Աղաջանյանի, Գ. Գրիգորյանի (Ջիոտտո), Գ. Գյուրջյանի և ուրիշ նկարիչների

ստեղծագործության մեջ: Կոջոյանի այդ տարիների քաղաքական և ժուռնալային գրաֆիկայում արտացոլվեց նկարչի աշխարհայացքը, նրա վերաբերմունքը հեղափոխության հանդեպ: Հայաստանում քաղաքացիական կռիվների տարիներին Կոջոյանը Կարո Հալաբյանի և Սեդրակ Առաքելյանի հետ մեկտեղ, աշխատում էր Ռուսաստանյան հեռագրական գործակալության Հայկական բաժանմունքի (АрмКавРОСТА) արվեստանոցում, ագիտացիոն պլակատների և ծաղրանկարների թողարկման վրա: Գրաֆիկական այդ թերթերը շարունակում էին «Окна РОСТА»-ի ավանդույթները, կենդանի ու ճշմարտացի խոսք էին տանում ժողովրդական զանգվածներին:

«Հեղափոխական պայքարի դժվարագույն եռամյակի արձանագրությունն է դա՝ հաղորդված գունաբծերով ու լոզունգների կրնգոցով: Հեռագրական ժապավեններ են դրանք՝ վայրկենապես պլակատի փոխված: Դեկրետներն են դրանք՝ իսկույնևեթ լայնորեն հրապարակված որպես չաստուշկաներ: Նոր ձև է դա՝ ներմուծված անմիջականորեն կյանքի կողմից»[2],— գրել է Վ. Մայակովսկին «Окна РОСТА»-ի մասին:

Հայ նկարիչների գրաֆիկական թերթերը չեն պահպանվել, դրանք ոչնչացել են քաղաքացիական կռիվների ժամանակ: Կոջոյանի ժուռնալային ձևավորումներն աչքի են ընկնում հայկական գրաֆիկայի համար նոր գեղարվեստական արտահայտչամիջոցներով: Այսպես. «Պայքար» հանդեսի շապիկը (1923 թ.) լուծված է հորիզոնական կառուցվածք ունեցող բազմաֆիգուր կոմպոզիցիայի ձևով: Գուաշով արված նկարում պատկերված է բանվորների միաձույլ շարք՝ նիզակներով, ուղղված բազմագլուխ վիշապի կողմը, որ թշնամու այլաբանական կերպարն է: Դրոշակների կոթերը, փողհարների շեփորները, մարդկանց շարժումները կոմպոզիցիայի ընդհանուր ռիթմական հիմքն են կազմում: Նույն թեման Կոջոյանը մարմնավորել է արծաթե վահանակի վրա արված դրվագապատկերում: 1923-ին նկարչի այս աշխատանքն առաջին կարգի դիպլոմի արժանացավ Մոսկվայում՝ «Գյուղատնտեսություն և տնայնագործական արդյունաբերություն» համամիութենական առաջին ցուցահանդեսում:

1925-ին Կոջոյանը Սարյանի, Շիլինգովսկու, Առաքելյանի, Տարագրոսի հետ մասնակցեց «Սովետական Հայաստանի հինգ տարին» ժողովածուի ձևավորմանը: Կոջոյանն արեց տիտղոսաթերթը՝ բանվորի և գյուղացու, մուրճ ու մանգաղի էմբլեմի պատկերով, ինչպես նաև Հայաստանի հասարակական ու մշակութային կյանքին նվիրված բաժինների մի շարք սյուժետային գլխապարդեր ու վերջնապարդեր: Տուշով արված նրա գլխապարդերն աչքի են ընկնում գրաֆիկ կառուցման ճշտորոշությամբ: Ֆրիզի տեսքով պետեղված վերնամասում՝ դրանք կազմակերպում են էջի ամբողջ տարածությունը, պատկերային մոտիվը կապելով տեքստի հետ:

Սովետական առաջին տասնամյակում Կոջոյանը հաճախ է դիմել հեղափոխական էմբլեմատիկային: Վերջինս հանդիպում է նրա ժուռնալային ձևավորումներում, մասնավորապես, այսպես կոչված, «փոքր ձևերի գրաֆիկայում»: Նկարիչը մասնակցել է Հայկական ՍՍՀ պետական գերբի էսքիզների ցուցահանդեսին, արել է բազմաթիվ էմբլեմներ՝ «աշխատանքի հերալդիկայի» մոտիվներով, հրատարակչական և փոստային դրոշմանիշեր, դրամանիշերի նմուշներ: Կոջոյանի ստեղծագործության բազմաժանրությունը շատ բանով բացատրվում է բուն ժամանակաշրջանի բնույթով, երբ սովետական առաջին հանրապետությունների նկարիչների առջև դրված էին մեծ խնդիրներ՝ սկսած քաղաքների ճարտարապետական հարդարանքից մինչև փոստային դրոշմանիշի ստեղծումը:

Քսանական թվականների վերջին պատմահեղափոխական թեմային դիմելու պարագան սերտորեն կապված է այն բանի հետ, որ Կոջոյանը մասնակցեց Հեղափոխական Ռուսաստանի նկարիչների ասոցիացիայի (АХРР) հայկական բաժանմունքի աշխատանքներին: Ասոցիացիայի ծրագրային հիմնական խնդիրներից էր «գեղարվեստա-վավերագրականորեն պատկերել պատմության մեծագույն պահը՝ նրա հեղափոխական պոռթկման մեջ»[3]:

[2] В. В. **Маяковский.** Собрание сочинений в 12-ти томах, т. 10, М.. 1941, стр. 321.

Կոջոյանի քսանական թվականների երկրորդ կեսի գրաֆիկայում լակոնական խստապարզ արտահայտչամիջոցները գերիշխում են նրա նախորդ աշխատանքներին բնորոշ կերպարային սիմվոլիկայի վրա: Այդ մասին է խոսում 1929-ին նրա ստեղծած «Կարմիր բանակի մուտքը Կարձևան» փայտափորագրությունը: Զուսպ ու արտահայտիչ է այդ գործի նկարչական լեզուն: Պատկերը կառուցված է ուղղաձիգ-տարածական կոմպոզիցիայով: Կոջոյանն այստեղ օգտագործել է գրաֆիկական տարբեր հնարանքներ, զուգահեռ ստվերագծումը զուգորդելով մուգ բծերի հետ, ֆիգուրների ուրվապատկերներն ապատ տեղադրելով առաջին պլանում և ընդգծելով ձևի պլաստիկան: Սուր, ուղիղ գծերով են տրված ճարտարապետական ծավալները, պլանների խորությունը, սահուն, ոլորուն գիծը լուսացոլքերով ցայտունորեն առանձնացնում է քաղաք մտնող հեծյալների, հետևակների ֆիգուրները:

Փայտափորագրության տեխնիկայով նկարիչն ստեղծել է ուրիշ գործեր ևս՝ «Ջորագյուղ», «Հունձ», «Լենինականը երկրաշարժից հետո»:

Հեղափոխական թեմատիկան իր արտահայտությունն է գտել նաև Կոջոյանի գունանկարչական աշխատանքներում: Հեղափոխության թեման, դրա մասշտաբայնությունն ու խորությունը լիակատար հնչողության հասան «Կոմունիստների գնդակահարությունը Տաթևում» կտավի մեջ (1930 թ.), որ վերապատկերում է Հայաստանում սովետական իշխանության հաստատման համար մղված պայքարի դրվագներից մեկը: Նկարի վրա աշխատելու շրջանում Կոջոյանն ուղևորություն կատարեց Զանգեզուր: Նա տեսավ ողբերգական իրադարձությունների հետ կապված վայրերը, հանդիպեց դեպքերի կենդանի ականատեսների հետ: Նկարի էսքիզներից մեկում, որ Կոջոյանն արել է այդ օրերին, պարզորոշ զգացվում է ապագա կտավի կոմպոզիցիոն հղացումը: Վերջինս հիմքում մնաց անփոփոխ: Սակայն բուն նկարում ուժեղացված է գունանկարչական պատումի դրամատիզմը: Պատկերն առնված է տարածության ներփակ հատվածի մեջ: Կոմպոզիցիայի սեղմ պարույրն իր մեջ խտացրել է մարդկանց շարժման ողջ լարված ռիթմը: Դաշնակի ֆիգուրը, որ պետեղված է առաջին պլանում, մարմնավորում է կոպիտ ուժն ու դաժանությունը՝ հակադրվելով կոմունիստի կերպարին, որն արդեն անընկճելի կամքի ու հոգևոր ուժի մարմնացումն է: Թեմայի զարգացումն իր հետագա շարունակությունն է ստանում կապված ձեռքերով քայլող կոմունիստի և մտրակը բարձրացրած դաշնակի ֆիգուրներում, ավարտվելով գնդակահարվողների ուրվապատկերներով: Այս նկարի սյուժետային-կոմպոզիցիոն հիմքը երկու կուլմինացիա է բովանդակում. հոգևոր, որպես դասակարգային երկու աշխարհայացքների հակադրություն, և բուն ողբերգության՝ գնդակահարության կուլմինացիան: Նկարի գեղարվեստական լեզվի խստաշունչ, լակոնական բնույթին ներդաշնակ է գորշավուն-միագույն տոների զուսպ գունային գամման: Կտավի գունանկարչական-պլաստիկական լուծումը մոնումենտալ նկարագիր է տալիս գործին:

Կոջոյանի «Կոմունիստների գնդակահարությունը Տաթևում» նկարի արժեքն ու նշանակությունը որոշվում է ոչ միայն այն բանով, որ դա հայ գեղանկարչության մեջ պատմահեղափոխական թեմայով արված առաջին կտավներից մեկն է: Այդ գործում հեղափոխության տարեգրությունը, ժամանակի շունչը կա, որ գոյատևում է սովետական արվեստի դասական այնպիսի երկերում, ինչպիսիք են Ա. Դեյնեկայի «Պետրոգրադի պաշտպանությունը», Կ. Պետրով-Վոդկինի «Կոմիսարի մահը»: Իր հասարակական արժեքի, ռեալիստական ուժի շնորհիվ Կոջոյանի «Կոմունիստների գնդակահարությունը Տաթևում» նկարը հաստատուն տեղ է գտել սովետական կերպարվեստի պատմության մեջ:

[3] ԱԽՌՌ-ի դեկլարացիան. II Выставка АХРР, М., 1922, стр. 3.

Օ՜, գրքերի աշխարհը — տիեզերք է անեզր: —
Ես սիրում եմ նրանց բազմախորհուրդ
Այս ինքնությունը դաշն, անկրկնելի,
Նրանց միջև եղած տարբերությունն այս խոր, —
Եվ բոլո՛րն են նրանք ինձ սիրելի:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

II

Հակոբ Կոջոյանի ստեղծագործությունը գրքի գրաֆիկայի ասպարեզում հայ արվեստի ամենահետաքրքիր էջերից է: Երեսնական թվականների նրա աշխատանքները սկիզբ դրին մեզանում գրքի ձևավորման գեղարվեստական սկզբունքներին, ստեղծագործական դպրոց դարձան նկարիչների հաջորդ սերունդների համար: Կոջոյանը ձևավորումներ ու նկարազարդումներ է արել իր կյանքի տարբեր շրջաններում, սակայն երեսնական թվականներին գրքի վարպետի տաղանդն առավել լիակատար ու բազմակողմանիորեն բացահայտվեց նրա ստեղծագործության մեջ: Նա գրքի էությանը հասու էր լինում ճշմարիտ արվեստագետի, խորաթափանց նկարչի մտքով ու զգացմունքով: Դրանով է բացատրվում ինչպես ձևավորման գրաֆիկական միջոցների խիստ ճշգրիտ ընտրությունը, այնպես էլ հարուստ երևակայությունը, հնարամտությունը լուծումների մեջ: Կոջոյանի ստեղծագործությունն այս ասպարեզում ասես ակներև հաստատումն էր այն մտքի, որ ինչքան տարբեր են իրարից հիրավի լավ գրքերը, այնքան էլ անկրկնելի է նկարչի ձեռքը: Եվ, իրոք, այդ շրջանում Կոջոյանի արած յուրաքանչյուր գրքային նշանակալի աշխատանք, լինի Ե. Չարենցի «Գիրք ճանապարհիի», Մ. Գորկու «Բանաստեղծությունների և լեգենդների», «Սասնա ծռեր» էպոսի, Ա. Վշտունու «Բանաստեղծությունների» ձևավորումը թե Ա. Բակունցի պատմվածքների համար արված նկարազարդումները, — աչքի է ընկնում դրանց հեղինակ—նկարչի վառ անհատականությամբ:

«Գիրք ճանապարհիի» ձևավորման վրա նկարիչն աշխատեց Չարենցի առաջարկով, որը երեսնական թվականների սկզբին Հայպետհրատի գեղարվեստական գրականության բաժնի վարիչն էր: «Գիրք ճանապարհին» Կոջոյանը խորապես ըմբռնեց ու զգաց ինչպես բանաստեղծական, այնպես էլ պատկերանկարչական առումով: Չարենցի երկերում աշխարհի պարգացման պատկերը բացահայտվում է իրար հաջորդող դարաշրջանների ֆոնի վրա: Դրանք փիլիսոփայական խոհեր են կյանքի և բնության, արվեստի, մարդու և նրա ստեղծարար աշխատանքի շուրջ:

«Ես ապշած էի հեղինակի մտքի խորությունից, նրա ուժից, այն բանից, թե ինչպես է նա կարողանում ստիպել ընթերցողին հետևել իրեն և վերապրել այն իրողությունները, որոնց մասին պատմում է ինքը... Որպես արվեստի նուրբ ու խստապահանջ գնահատող, նա թափանցում էր աշխատանքի բոլոր մանրամասների մեջ և օժտված էր գործի հիմնական իմաստն ու հիմնական ոգին նկատելու արտակարգ ունակությամբ», — գրել է Կոջոյանը Չարենցի մասին[4]:

«Գիրք ճանապարհին» բացվում է Չարենցի դիմանկար-ճակատապարդով, որ արված է կուգահեռ նուրբ ստվերագծման բացառիկ արտահայտչությամբ: Ճակատապարդի հետ, մյուս էջին տիտղոսաթերթն է: Սրա կոմպոզիցիան ամփոփում է հորիզոնական գլխապարդեր, ուր պատկերված են շինարարներ, աշխատանքի տոնն ազդարարող և նոր Երևանի ծնունդը խորհրդանշող փողհարների, թմբկահարների երթաշարք: Կոջոյանի նկարազարդումների բնույթը կանխորոշվել է «Գիրք ճանապարհիի» պատումի բազմապլանությամբ, ուր բանաստեղծը տողեր է նվիրել «Սասունցի Դավիթ» էպոսին, Հայաստանի պատմությանը, նրա պոեզիային ու մշակույթին: Յուրաքանչյուր նկարազարդված էջի ոչ մեծ տարածքը հիշեցնում է գրաֆիկական մանրանկար՝ բանաստեղծականորեն ու

4 Հ. Կոջոյան. Тонкий ценитель искусства. «Коммунист», 1957, 28. XI.

նրբորեն լուծված գծանկարի միջոցներով, ուր հստակորեն պահպանված է գրաֆիկական համակարգի պարզորոշությունը: Էպոսի հերոսների, միջնադարյան մանրանկարիչների, հեղափոխության մարտիկների ու դարբինների կերպարները պատկերված են գեղարվեստական-բանաստեղծական ընդհանուր դաշնությամբ: Տիտղոսաթերթի լուծման մեջ նկարչի ընտրած ռիթմը, որպես գրաֆիկական կառուցվածքի բաղադրատարր, անցնում է բոլոր նկարազարդումների միջով՝ դրանք միավորելով մեկ ամբողջի մեջ: Նկարազարդումների կոմպոզիցիան ամփոփում է մի շարք հորիզոնական գլխապարդեր՝ համախմբված գրքի էջի տարածությամբ, գլխատառով ու բանաստեղծական տեքստի ձեռագրատառային շերտերով, որոնք գրաֆիկական յուրատեսակ միջնատարածք են ստեղծում: «Գիրք ճանապարհիի» ամբողջ ձևավորումը Կոջոյանն արել է կերպարային միասնական լուծմամբ: Յուրաքանչյուր էջի տարածությունը շրջանակող կարդագծերը գրքին խստապարզ և ոճականորեն ավարտուն տեսք են տալիս՝ նկարազարդումներն օրգանապես կապակցելով գրքի տեքստի և ընդհանուր կառուցվածքի հետ: Այստեղ Չարենցի բանաստեղծական լեզուն և Կոջոյանի գրաֆիկական ոճը գեղարվեստական վարպետության անկրկնելի համաձուլվածք են կազմել:

1934-ին Կոջոյանը ձևավորեց Մ. Գորկու «Բանաստեղծություններ և լեգենդներ» ժողովածուի հայերեն առաջին հրատարակությունը: Ինչպես նախորդ աշխատանքում, այնպես էլ այստեղ Կոջոյանը լուծել է ամբողջ գրքի գեղարվեստական ամբողջականության խնդիրը: Արտահայտչամիջոցներն օրգանապես փոխկապակցված են երկի պոետիկայի հետ: Գրաֆիկական շարժումը սկսվում է սուպեր-շապիկից և աճում ֆորզացում, ուր Մրրկահավի ուրվապատկերը նրբագծերի ճերմակ բռնկմամբ «պատռում է» սև ֆոնի մակերևույթը: Այս դինամիկան պահպանված է «Մրրկահավի երգը», «Աղջիկն ու Մահը», «Խանն ու նրա որդին», «Բալլադ կոմսուհի Էլլեն դը Կուրսիի մասին» երկերի նկարազարդումներում: Սակայն այստեղ նկարազարդումների լուծման սկզբունքը որոշ յուրահատկություններ ունի, որոնք պայմանավորված են Գորկու վաղ շրջանի ստեղծագործությունների ռոմանտիկ բնույթով: Այդ յուրահատկություններն ի հայտ են գալիս ամենից առաջ պատկերի կոմպոզիցիոն համակարգում: Կոջոյանն այստեղ դիմում է ինչպես նկարազարդման հիմքը կազմող առանձին կերպարների, այնպես էլ բազմաֆիգուր և բազմապլան պատկերումների: Այսպես. «Աղջիկն ու Մահը» հեքիաթի պատկերներից մեկում Աղջկա կերպարը դառնում է երկի գաղափարի միակ և ընդհանրացված կրողը: Այլ կերպ է հղացված նույն հեքիաթի երկրորդ նկարը: Թերթի վերնամասում նկարիչը պատկերել է հեծյալ թագավորին, ներքևում, մուգ բծով նշագծել է ամբոխի և Աղջկա բազմաֆիգուր կոմպոզիցիան, Աղջիկը՝ առաջին պլանում, ուրվապատկերային պարագծումով: Երկու սկզբունքների դրամատիկ բախումն այստեղ տրված է հակադիր տոների գրաֆիկական միջոցներով: Ձիով սլացող թագավորի ֆիգուրը, բացառիկ ավարտունության և պլաստիկ ձևի գեղեցկության շնորհիվ, ընկալվում է իբրև կերպար—փոխաբերություն՝ մարմնավորված գրքանիշի մեջ:

Նկարիչը խստապարզ ձևով է կառուցում տարածական պլանները՝ խորությունն ընդգծելով թերթի ճերմակությամբ, համարձակորեն ու արտահայտչորեն օգտագործելով գրաֆիկայի ուրվագծային հնարանքները:

Կոջոյանի նկարազարդումները 1934 թվականին ներկայացվեցին Մոսկվայում, սովետական գրողների առաջին համագումարի առթիվ բացված ցուցահանդեսում: Գորկին, ծանոթանալով ցուցահանդեսին, ըստ արժանվույն գնահատեց հայ նկարչի աշխատանքները[5]: Մ. Գորկու «Բանաստեղծություններ և լեգենդներ» ժողովածուի համար Կոջոյանի արած նկարազարդումներն այժմ գտնվում են գրողի մոսկովյան հուշաթանգարանի հավաքածուում:

Կոջոյանի գեղարվեստական հնարանքների բազմազանությունը նրա գըր-

5 «Правда», 1934, 24. VIII.



Հակոբ Կոջոյան. Փարիզ, 1908 թ.
Акоп Коджоян. Париж, 1908 г.
Hakob Kojoyan. Paris, 1908.

քա-գրաֆիկական աշխատանքներում առանձնապես նկատելի է Ե. Չարենցի «Գիրք ճանապարհի» և Մ. Գորկու «Բանաստեղծություններ և լեգենդներ» ժողովածուի ձևավորումները համեմատելիս: «Գիրք ճանապարհի» վրա կատարած աշխատանքում Կոջոյանի համար պատկերավորման գլխավոր միջոց է մնացել գիծը, սրա դինամիկան, կոնստրուկտիվ դերն ու սրությունը: Իսկ «Բանաստեղծություններ և լեգենդներ» ժողովածուի ձևավորման հիմքում ընկած է մուգ բծի վարպետ օգտագործումը, նրա կուգորդումը սպիտակ նրբագծերի հետ, որ առանձին արտահայտչություն և պլաստիկ ամբողջականություն է հաղորդել բոլոր նկարապարդումներին:

Հակոբ Կոջոյանի արվեստը խորապես կապված է հայ գեղարվեստական մշակույթի ավանդույթների հետ: Լինելով գունանկարի և գրաֆիկայի վարպետ,

նա միաժամանակ հայկական պարդանկարի, խաչքարերն ու միջնադարյան տաճարների ճակատամուտքերը պարդարող քարե նախշերի, մանրանկարչության, կիրառական արվեստի գործերի նուրբ գիտակ էր: Սակայն նկարիչը չէր դիմում հայ պարդարվեստի մոտիվների անմիջական օգտագործմանը կամ ոճավորմանը: Նա դիմում էր կերպարային ակունքներին, ժողովրդական վարպետների ստեղծագործություններին՝ իր աշխատանքում մարմնավորելով անհատական գեղարվեստական որոնումները: Այսպես, նրա գրքային աշխատանքներում՝ «Սասնա ծռեր» էպոսի և «Հայ պոեզիայի անթոլոգիայի» տիտղոսաթերթերի, գլխապարդերի ձևավորումներում կգացվում են հայկական հին ձեռագրերը պարդարող խորանների ավանդույթների ոգին ու ոճական առանձնահատկությունները, իսկ Վարդան Այգեկցու «Աղվեսագրքի» գլխատառերը ստեղծագործաբար ու կերպարայնորեն վերստեղծում են միջնադարյան վարպետի ձեռագիր պատկերը: Օգտագործելով կենդանակերպ սկզբնատառերի սկզբունքը, որ տարածված էր հայ միջնադարյան ձեռագրերի պարդարվեստում, Կոջոյանը ստեղծում է առակապատումի սեփական պատկերային լեզուն՝ տուշով հմտորեն արված գծանկարներում պահպանելով կերպարային արտահայտչությունը:

Գրքի գրաֆիկայի ասպարեզում Կոջոյանի երեսնական թվականների աշխատանքն ամենից առաջ ի հայտ է բերում նկարչի մոտեցումը գրքին, նրա կոնստրուկցիային, ստեղծագործական ընկալման բնույթին: Նկարչի ըմբռնմամբ, գրքի բովանդակությունն է նախ և առաջ կանխորոշում նրա կառուցվածքը: Ուստի որևէ գիրք ձևավորելիս Կոջոյանը առաջնային նշանակություն էր տալիս նրա ներքին արխիտեկտոնիկային, հարմոնիայի օրենքներին, որոնք բացահայտվում են գրքի, որպես գեղարվեստական միասնական օրգանիզմի, ամբողջական ընկալման դեպքում միայն:

Նման աշխատանքի օրինակ եղավ Սայաթ-Նովայի «Խաղերի ժողովածուն», որ Կոջոյանը ձևավորեց քառասնական թվականներին: Ֆորզացի վառ կապույտ ֆոնի վրա պետեղված են արծաթավուն պարդանախշ և աշուղի նստած ֆիգուրի ուրվապատկերը: Ֆորզացին հաջորդող տիտղոսաթերթն իր խստապարզ գեղեցկությամբ ընթերցողին նախապատրաստում է մուտք գործելու պոեզիայի աշխարհը: Ճակատապարդը ներկայացնում է Սայաթ-Նովայի դիմանկարը: Նկարապարդումներում բանաստեղծականորեն պատկերված են աղջիկների կերպարներ՝ ազգային նկարագրով, բնության տեսարաններ՝ ձյունափառ լեռների ուրվապատկերներ, վարդագույն բոցի պես բռնկված ծաղկուն ծառեր: Շմուցտիտուլները պետեղված են պատկերների հետ կից էջի վրա և ամփոփում են խորագիրը, սյուժետային պատկերն ու բանաստեղծական տեքստը: Դրանցով են բացվում հայկական, վրացական ու ադրբեջանական խաղերի բաժինները:

Սայաթ-Նովայի «Խաղերի ժողովածուի» ձևավորումն հատկանշվում է կատարման գրաֆիկական բարձր կուլտուրայով: Գույները, գծերը, կոմպոզիցիան համահունչ են բանաստեղծական կերպարներին: Նկարիչը նրբորեն է արտահայտել Սայաթ-Նովայի քնարերգության աշխարհը: Գրքի գրաֆիկայի ասպարեզում քառասնական թվականներին Կոջոյանի արած առավել խոշոր ու լավագույն աշխատանքներից է այս ժողովածուն: Նույն շրջանում նկարիչը հրատարակության պատրաստեց նաև Ավ. Իսահակյանի «Ընտիր երկերը», Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգությունը: Վերջինիս նկարապարդումներից մի քանիսն աներկբա հետաքրքրություն են ներկայացնում, աչքի են ընկնում պլաստիկական արտահայտիչ գծանկարով ու հուզական ուժով: Դրանցից են «Աստղատանի Նինոս արքայի ձերբակալությունը», «Արա Գեղեցիկն ու աստրական դեսպանները», «Արայի դիակի վրա ողբացող Շամիրամը» գրաֆիկական թերթերը: Պակաս հաջողված են ողբերգության հերոսների առանձին դիմապատկերները: «Արա Գեղեցիկի» վրա աշխատելիս Կոջոյանը առաջնային դեր հատկացրեց նկարապարդումներին, որոնք կտրված են մնացել գրքի ողջ անսամբլից: Դրանք ավելի շուտ իրենցից ներկայացնում են հաստոցային գր-

րաֆիկայի գործեր՝ սուկ թեմատիկորեն միավորված գրքի համակարգում: Բացի այդ, հրատարակության մեջ պետեղվելով տոնային տպագրությամբ, դրանք ամբողջովին կորցրին բնօրինակի գունային աստիճանավորման բազմազանությունը:

Գրքի գրաֆիկայի ասպարեզում Կոջոյանի աշխատանքն ընդգրկում է երեք տասնամյակ: Լայն ու բազմազան է նկարչի ձևավորած գրքերի թեմատիկան: Բանաստեղծությունների ժողովածուներ են դրանք, հեքիաթներ, հայ գրողների պատմվածքներ, հասարակական-քաղաքական և երաժշտական հրատարակություններ:

Նկարչի աշխատանքը գրքի ձևավորման վրա Հակոբ Կոջոյանի համար պրոֆեսիոնալ բարձր վարպետության չափանիշ էր:

«Ես շատ եմ աշխատել գրաֆիկայի պրոբլեմների վրա, ինձ հետաքրքրել է ամենից առաջ որակի հարցը, որ պետք է համապատասխանի նկարազարդվող գրքի բովանդակությանը: Գրքի ձևավորումներում իմ խնդիրն է եղել գրքի բովանդակությունը հաղորդել վառ ճշմարտացի կերպարներով: Ես առավել հաջողված եմ համարում Մ. Գորկու, Ե. Չարենցի, Սայաթ-Նովայի, Ն. Զարյանի գրքերի իմ ձևավորումները»,— գրել է նկարիչը[6]:

Հակոբ Կոջոյանի ձևավորած գրքեր... Չարենցի կրնգուն երգն է դա, Գորկու ռոմանտիկ պոեզիան, Սայաթ-Նովայի խաղերի երաժշտությունը: Բանաստեղծի ու նկարչի կենդանի աշխարհն է դրանց մեջ:

Ժամանակաշրջանի էջեր՝ մտքի և գեղեցկության լույսով ողողված:

> Մարդկային բոլոր հասկացությունների մեջ ամենահավերժականը գեղեցիկի գաղափարն է, գեղեցիկն անմահ է:
>
> Վ. ՍՈՒՐԵՆՅԱՆՑ

III

Հակոբ Կոջոյանի կյանքում 1940—1950 թվականները մեծ ու արգասավոր աշխատանքի ժամանակ եղան արվեստում: Այս շրջանում ստեղծված գործերը նկարչի ստեղծագործական բազմակողմանի որոնումների վկայությունն են: 1941-ին Կոջոյանն արեց Հ. Ստեփանյանի «Սասունցի Դավիթ» օպերայի դեկորացիաների էսքիզները: Սակայն օպերայի բեմադրությունը չիրականացավ: Նկարիչը շարունակեց աշխատել հաստոցային գունանկարի, գրքի գրաֆիկայի ասպարեզում, էսքիզներ անել դեկորատիվ-մոնումենտալ և կիրառական արվեստի ստեղծագործությունների համար:

Կոջոյանի մեծածավալ աշխատանքներից է «Սասունցի Դավթի ծնունդը»: Բազմաֆիգուր կոմպոզիցիան լուծված է ամրոցի պարսպի առջև: Տարածության խորությունն ընդգծվում է թեք աստիճաններով, որ տանում են դղյակի մուտքի առջևի վերին բաց հրապարակը: Այստեղ պատկերված է ծերունու փառահեղ մի ֆիգուր, որ ձեռքերի վրա պահել է մանուկ Դավթին: Հանդիսավոր իրողության մասին ազդարարում են ամրոցի պարիսպների վրա կանգնած փողհարներն ու ջահակիրները: Ներքևում մարդկային ամբոխ է՝ հին մատյաններով ու մագաղաթագալարներով ծերունիներ, նիզակներով ռազմիկներ, կանայք ու երեխաներ: Կտավի գունային գամման կառուցված է կարմրավունի, կապույտի և կանաչավունի հնչողության վրա: Բաց վարդագույն-մոխրագույն երանգներով արված ֆոնը բոցի ցոլքեր է հիշեցնում:

«Սասունցի Դավթի ծնունդը» սյուժետային-թեմատիկ կտավի ստեղծումը հայ գեղանկարչության պատմության մեջ էպոսի գեղարվեստական մարմնավորման առաջին օրինակներից եղավ:

---

[6] Հ. Կոջոյանի ինքնակենսագրությունը: Նկարչի ընտանեկան արխիվ, Երևան:

էպոսում, լեգենդներում, հեքիաթներում իր արտահայտությունը գտած ժողովրդական ստեղծագործության կերպարների աշխարհը միշտ հուզել է Հակոբ Կոջոյանին բանաստեղծական ուժով, ֆանտազիայով, հոգևոր գեղեցկությամբ: Ժողովրդական ստեղծագործությունը մոտ ու հարազատ էր նկարչին, նրա գեղարվեստական մտածողությանը, ուստի նա կարողանում էր այնքան խոր ու անմիջականորեն հաղորդել այդ ստեղծագործության բնույթը, էությունն իր գործերում:

1956-ին Կոջոյանը նկարազարդեց Հ. Թումանյանի «Փարվանա» լեգենդը: Սիրո, որպես կյանքի ու մարդու գեղեցկության խորհրդանիշի, գաղափարը նրբորեն է զգացել և հաղորդել Կոջոյանն այս գործում: Բանաստեղծին ու նկարչին միավորել են սերն առ ժողովրդական երգը, ավանդությունը, հեքիաթը, նրանք դիմել են դրանց իբրև պոեզիայի կենդանի աղբյուրի:

«Լեգենդներում և ավանդություններում, ուր պատմական ռեալ իրադարձությունների պատկերումը հանդես է եկել կախարդական, հեքիաթային տարրի հետ, Թումանյանը գտել է ժողովրդական ֆանտազիայի ինքնօրինակ մի աշխարհ: Ֆոլկլորը եղել է հայ բանաստեղծի ստեղծագործության հիմնական սկզբնաղբյուրներից մեկը, որից նա իր շատ ու շատ երկերի թեմաներն է քաղել»[7]:

Նույն շրջանում Կոջոյանն աշխատում էր հայկական ժողովրդական հեքիաթների երկու ժողովածուների ձևավորման և նկարազարդումների վրա: Այստեղ նրա նկարազարդումները հատկանշվում են սյուժետային բազմազանությամբ, կենդանի երևակայությամբ ու բարի հումորով: Պատկերելով ագահ ու անկշտում տերտերին կամ «Քաջ Նազարի» վախկոտ հերոսին, Կոջոյանը բանաստեղծականորեն զուգորդել է կյանքային ճշմարտությունն ու հեքիաթային հղացումը: «Արջի քոթոթը», «Արհեստը ոսկի է», «Մաճկալի տղան» հեքիաթների նկարազարդումները համահունչ են դրանց մեջ ներդրված՝ աշխատանքի գեղեցկության, մարդկային համեստության ու բարության վերաբերյալ ժողովրդի պատկերացումներին: Հումորի զգացումով են արված պարող գազանների ֆիգուրները, հեքիաթային հմայքով է լի հրեղեն նժույգը կապուտակ լճի ափին: Յուրաքանչյուր հեքիաթի ձևավորում ավարտվում է պատկերի և գլխազարդի հետ թեմատիկորեն կապված վերջնազարդով: Նկարիչն ստեղծել է կերպարային ինքնատիպ համակարգ, որ անցնում է հեքիաթների ամբողջ ժողովածուի միջով: Կոմպոզիցիոն լուծումներում ի հայտ է եկել բոլոր մանրամասները գեղարվեստական հղացմանը ենթարկելու կոջոյանական հմտությունը: Գուաշով արված այդ պատկերներն աչքի են ընկնում վառ ու հնչեղ տոներով, լուծված են ժողովրդական ֆոլկլորի հիմքի վրա և ազգային են կատարման բնույթով: Հայկական ժողովրդական հեքիաթների ձևավորման վրա աշխատելիս Կոջոյանն ինքն իրեն չսահմանափակեց արդեն գտնված լուծումներով. նա ստեղծեց մոտ հարյուր քսան պատկերներ, գլխազարդեր ու վերջնազարդեր:

Հեքիաթների համար Կոջոյանի արած նկարազարդումների գեղարվեստական արժեքը որոշվում է ոչ միայն գրքի գրաֆիկայի ոճի հետ դրանց օրգանական կապով, այլև այն բանով, որ նա գրքի նկարազարդումներում հեքիաթային թեմատիկան հետևողականորեն մշակող հայ առաջին նկարիչներից եղավ:

Հոր ոսկերչական արհեստանոցում անցկացրած մանկության տարիները, գեղարվեստական արհեստի կատարյալ իմացությունը կանխորոշեցին այն պարագան, որ նկարիչը հետագայում էլ բնահատուկ հետաքրքրություն ցուցաբերեց կիրառական արվեստի հանդեպ:

Քառասնական թվականների կեսերին նա արեց արծաթյա իրերի, հիմնական թվականներին՝ խեցեգործական առարկաների էսքիզներ: Արծաթե սափորի, սկուտեղի, թասի էսքիզներն աչքի են ընկնում ձևի և դրվագանախշերի բազ-

---

[7] **Ованес Туманян**, Стихотворения и поэмы. Вступительная статья К. Григоряна. Л., 1969, стр. 23

մապանությամբ: Նկարիչը ստեղծեց բուսական և երկրաչափական դրվագային կարդապատկերներ, ներմուծեց ոսկեթերթային սիրին թռչունի մոտիվը:

Ճենապակյա և հախճապակյա ամանների էսքիզներում զգացվում է նկարչի հղացումների հարստությունն ու յուրօրինակությունը: «Սայաթ-Նովա» ափսեի էսքիզում Կոջոյանը պատկերել է աշուղի նստած ֆիգուրը կարդանախշ ֆոնի վրա, որ ոսկեկար բանվածք է հիշեցնում: Մի այլ էսքիզում նկարիչը դեկորատիվ կարդանկարին հայ աղջկա նրբորեն արված պատկեր է միահյուսում: Այս ամաններում պահպանված են ժողովրդական վարպետների խեցեգործական առարկաների ավանդական ձևերը:

Կոջոյանի ստեղծագործությունն այս ասպարեզում իր բարերար ազդեցությունն ունեցավ հայ կիրառական արվեստի հետագա զարգացման վրա:

Հիսնական թվականներին գունանկարում Կոջոյանը նորից դիմեց բնանըկարի ժանրին: Նկարիչը լի էր հայրենի երկրում իր տեսածը գույներով հաղորդելու խանդավառությամբ ու տենչով: Դեպի բնությունը վարպետի այս վերադարձի մեջ կյանքի հավերժական թեմային, ժամանակների կապին, շրջապատող աշխարհի գեղեցկության զգացումին հասու լինելու իրողությունը կա: Նա շարունակեց իր գառնի-գեղարդյան նկարաշարը, որ սկսել էր քսանական թվականներին, նոր գործերի մեջ պահպանելով նախորդների գունանկարչական համակարգը: Նկարչի այդ շրջանի մյուս աշխատանքներն ավելի են հագեցած գույնով: Կանաչի և դեղինի հնչեղ երանգներով է շնչավորվում բնությունը ջերմուկյան բնանկարներում: Լույսով ու կյանքի կարթոնքի ուժով է համակված «Գարուն» նկարը:

Կոջոյանի հիմնական թվականների բնանկարների կոմպոզիցիան հաճախ կառուցված է գունային հարթությունների տարածական հերթագայության վրա, գունանկարում օգտագործված են տոնային հարաբերակցություններ և գունային մեղմ անցումներ:

Լինելով Գ. Բաշինջաղյանի, Ե. Թադևոսյանի, Մ. Սարյանի, Ս. Առաքելյանի նման բնանկարային գեղանկարչության խոշոր վարպետների ժամանակակիցը, Հակոբ Կոջոյանը, այնուհանդերձ, մնաց հայկական բնությունը խորապես անհատականորեն ընկալող նկարիչ:

Կոջոյանն աշխատեց մինչև կյանքի վերջին օրերը. վախճանվեց 1959-ի գարնանը: Ինչի էլ դիմեց նա՝ գունանկար, կտավ թե գրքի նկարազարդում, հրատարակչական մակնիշ թե արծաթյա գավաթի էսքիզ, միշտ ճշմարիտ ստեղծագործող մնաց: Աշխատում էր երկար, ժամանակ ու հանգիստ մոռացած: Վարպետի այդ «ստեղծագործական ժամերի» մասին է հիշում Մ. Ասլամազյանը. «Ուսանողուհի եղած ժամանակս հաճախ էի անցնում Կոջոյանի արվեստանոցի պատուհանների մոտով և միշտ նրան տեսնում էի սեղանի մոտ աշխատելիս: Նրա ուշադրությունը չէին շեղում ո՛չ փողոցի աղմուկը, ո՛չ առևտրականների կանչերը, ո՛չ երեխաների խաղերը: Լռակյաց ու ներամփոփ՝ նա ամբողջովին տրվում էր իր արվեստին»[8]:

Հակոբ Կոջոյանի ստեղծագործությունները տեղ են գտել Լենինգրադի ռուսական թանգարանում, Մոսկվայի արևելքի ժողովուրդների արվեստի թանգարանում, Կիևի ռուսական արվեստի թանգարանում, Հայաստանի պետական պատկերասրահում: Վարպետի արվեստը լայն ճանաչում էր ստացել դեռևս երեսնական թվականներին: Այդ շրջանում նրա գործերը ներկայացվել են սովետական գրաֆիկայի միջազգային մի շարք ցուցահանդեսներում (Լոնդոն, Ֆիլադելֆիա, Դանցիգ):

1973-ին Երևանում բացվեց Հակոբ Կոջոյանի տուն-թանգարանը, ուր ցուցադրված են գունանկարչական և գրաֆիկական աշխատանքները: Այստեղ ներկայացված է նրա վերջին գործերից մեկը՝ «Սասունցի Դավիթ»

[8] **М. Асламазян.** Творчество Акопа Коджояна. «Искусство», 1959, № 8.

կտավը (1958 թ.): Նկարչի արվեստանոցում, պատկերակալի վրա, մնում է նրա «Անիի ավերակները» անավարտ նկարը:

Հակոբ Կոջոյանի գունանկարը հատկանշվում է թեմատիկ բազմազանությամբ: Իր ստեղծագործության մեջ դիմելով հայ ժողովրդի կյանքին, նրա պատմական անցյալին, Կոջոյանը միաժամանակ իր դարի, հեղափոխության ծնունդ նոր ժամանակների արվեստագետ էր: Հեղափոխության թեման բարձր հնչողություն ստացավ նրա գրաֆիկայում, թափանցելով նաև վարպետի գունանկարի ոլորտը:

Բացառիկ է Կոջոյանի ստեղծագործության նշանակությունը հայ սովետական գրաֆիկայի պատմության մեջ: Գրքի ձևավորման արվեստում նրա դերը մեկանում կարելի է համեմատել այն դերի և նշանակության հետ, որ մեր ժամանակների ռուսական գրքի գրաֆիկայում ունեցավ Ֆավորսկու գործունեությունը:

Հայկական գրաֆիկայի վարպետի ստեղծագործությունը բարձր է գնահատել Մարտիրոս Սարյանը.

«Հակոբ Կոջոյանը դարձավ ականավոր գրաֆիկ և մեծ ազդեցություն գործեց Հայաստանում արվեստի այդ ճյուղի զարգացման վրա: Գրաֆիկայի ասպարեզում, իր ստեղծած մի շարք գործերում, նա հանդես եկավ որպես նորարար, մեծ ճաշակով ու վարպետությամբ լուծելով իր առջև դրված խնդիրներն ու հղացումները»[9]:

Կոջոյանի ստեղծագործության մեջ նրա նախասիրած կերպարներից մեկը Փյունիկ թռչունն էր: Բոցերում վառվող և մոխիրներից վերստին հառնող Փյունիկի կերպարը նկարչի համար մնաց իբրև արվեստի անմահության խորհրդանիշ:

Այն բանում, որ Հակոբ Կոջոյանը դիմեց հայկական էպոսին, դասական պոեզիայի էջերին, հայրենի բնության պատկերներին ու գույներին, արտահայտվում է նկարչի ճշմարիտ ուժը, արարիչ-արվեստագետ, որ հայտնաբերեց գեղեցկության ու ֆանտազիայի ուրույն մի աշխարհ և հիասքանչ ժառանգություն թողեց հայ կերպարվեստի պատմության մեջ:

ԲՈՐԻՍ ԶՈՒՐԱԲՈՎ

[9] **Մ. Սարյան,** Հակոբ Կոջոյան. «Սովետական Հայաստան» ամսագիր, 1953, № 12

Рука моя уйдет, а письмена останутся.

Из армянской средневековой рукописи

I

Искусство Акопа Коджояна. Оно рождено живой фантазией художника и глубоким чувством прекрасного. В нем та подлинная сила неповторимости, печать которой всегда лежит на творении мастера. Живопись, графика, прикладное искусство во всем многообразии творческих исканий привлекали Коджояна на протяжении всей жизни в искусстве. Он работал маслом и темперой, акварелью и гуашью, тушью и карандашом, его интересовали ксилография и меццо-тинто.

Мир образов Акопа Коджояна оживает в Картинной галерее Армении, в зале художника. Давид Сасунский, летящий на огненном коне Джалали, поэзия «Азаран блбула», одухотворенная волшебной кистью природа Армении, этой суровой и древней земли: каменная симфония Гегарда, снежная корона Арарата.

Акоп Коджоян знал художественную культуру Западной Европы, жизнь и искусство Востока, русскую дореволюционную графику и живопись, но его творчество всегда сохраняло ярко выраженный национальный характер. Оно связано тесными узами с истоками и традициями художественной культуры Армении и вместе с тем открывает страницы истории искусства нового времени.

Художественная культура мастера в области станковой и книжной графики, тонкое совершенство иллюстратора, его работа над первыми советскими армянскими книжными изданиями позволяют считать Коджояна основоположником армянской советской графики.

Искусству Акопа Коджояна принадлежит одно из главных мест в художественной летописи Советской Армении. Вместе с Таманяном, Чаренцем, Спендиаровым и Сарьяном Акоп Коджоян принадлежал к первой плеяде деятелей армянской культуры нашего времени, стоявших у истоков ее развития.

Коджоян родился в 1883 году в Ахалцихе, в семье ювелира. Детские годы будущего художника прошли во Владикавказе. Здесь он учился в городском училище и работал в мастерской отца, обучаясь у старших братьев ювелирному делу, искусству гравирования и чеканки. В период жизни во Владикавказе Коджоян сблизился с Махарбеком Тугановым, в будущем известным осетинским художником. Туганов, будучи старше Коджояна на несколько лет, стал заниматься с ним, прививать ему навыки усвоения живописной техники. Свой первый живописный этюд «Мастера-ювелиры» Коджоян выполнил в 1898 году.

В шестнадцатилетнем возрасте Коджоян поступил в мастерскую гравера Прусова в Москве. По совету Туганова он решил получить профессиональное художественное образование в Мюнхене.

В это время Мюнхен, наряду с Парижем, был одним из ведущих культурных центров Европы. Он представлял интерес для художников благодаря богатым собраниям Глиптотеки, Старой пинакотеки и Академии художеств. В конце XIX—начале XX века в Мюнхене проходили обучение И. Э. Грабарь, Д. Н. Кардовский, М. В. Добужинский, В. А. Фаворский; из армянских художников в 80-х годах—В. Я. Суренянц, в 90-х А. С. Акопян.

В начале девяностых годов Акоп Коджоян поступил в студию художника Антона Ашбе в Мюнхене. Живой и интересный портрет Ашбе, наряду с описанием школы, оставил в своих воспоминаниях известный русский график М. В. Добужинский.

«...Ашбе почти каждый день посещал школу. Он был сущий гном, с большой головой, со свисавшим на лоб коком шевелюры и с вихрастыми усами... Педагог Ашбе был очень умелый. Ашбе учил светотень

распределять на рисунке головы соответственно с распределением силы теней и рефлексов на шаре... Я помню в школе работы некоторых учеников, рисовавших только одними прямыми линиями,—подобие будущих кубистических рисунков. В этой «системе Ашбе» самым ценным было обобщение и упрощение формы, что для меня, как и для всех новичков, являлось действительно новым и свежим словом».

Однако метод Ашбе заключал в себе и определенные ограничения, проявившиеся со временем как в отношении всей системы рисунка, так и живописи — «красочной и жирной» и, по мнению Добужинского, «лишенной самого главного — тона... Я замечал, что те, кто очень давно сидел у Ашбе, делались на одно лицо и впадали в шаблон».[1]

Годы учебы в Германии способствовали знакомству Коджояна с живописью старых мастеров и новыми художественными течениями. С особым интересом относился Коджоян к творчеству Дюрера, изучая его гравюры, к художественному наследию Гольбейна и Кранаха.

Вскоре Коджоян поступил в Мюнхенскую Академию художеств, по окончании которой в 1907 году провел около двух лет в Париже. По возвращении в Россию художник жил в Москве, занимаясь в основном станковой живописью. В годы первой мировой войны Коджоян был мобилизован в армию и не имел возможности заниматься художественным творчеством.

Ранние произведения Коджояна почти не сохранились, исключение составляют «Портрет художника Дубаха», «Автопортрет» 1907 года, карандашный рисунок с изображением матери художника, выразительно передающий черты ее лица и детали одежды. Но они представляются скорее этюдными опытами, которые, естественно, не дают представления о характере его искусства тех лет. Путь Коджояна в искусстве в своем последовательном развитии и цельности прослеживается лишь с 1918 года, со времени его приезда в Армению.

В 1918 году Коджоян совершил поездку в Ани с археологической экспедицией Н. Я. Марра. Средневековая столица Армении, лежавшая в развалинах, с ее известными в прошлом и частично сохранившимися дворцовыми и церковными сооружениями, фрагментами фресковой живописи—все это увлекло воображение художника. Акварельные этюды и зарисовки, выполненные на месте, легли в основу создания в 1919 году картины «Развалины города Ани». На синем фоне в коричневых тонах передал художник рельефные грани крепостной стены и руины дворца. Суровая простота и эпическая сила придают этой небольшой работе глубокое эмоциональное звучание. Вместе с тем пейзаж Коджояна, не будучи документальным по характеру изображения, историчен в своем философско-художественном осмыслении. В нем раздумья художника о великом творческом наследии, о судьбе армянского народа, пережившего историческую трагедию времени. В последующие годы Коджоян возвращался в живописи и графике к теме Ани. Одна из картин на эту тему, написанная им в 1925 году, находится в собрании Русского музея.

В начале двадцатых годов Коджоян провел около двух лет в Иране, в Тавризе. Перед его глазами лежали руины Голубой мечети, крепостные стены Алишаха, минареты, вознесенные в синеву неба. Здесь проходила жизнь восточного города с его оживленными улочками, где в многоязычной толпе смешались горожане—женщины, закутанные в чадру, торжественно шествующий мулла в белом тюрбане, дервиши, где воздух был полон звонкого гула, рожденного из смеха, брани и криков торговцев. Впечатления художника отразились в созданных им жанровых полотнах «Улица в Тавризе» и «Столовая в Тавризе». Каждый из образов, переданный Коджояном, остро прочувствован в своем характере, облике, движении. И вместе с тем художник вносит в картины элементы гротеска, которые придают полотнам некоторую условность. В этот период художник работал в основном темперой. В картине «Столовая в Тавризе» живописная гамма несколько приглуше-

[1] **А. Моров.** М. В. Добужинский вспоминает... Сборник «Панорама искусств». М., 1979, стр. 156—157.

на, она построена на сочетании серовато-синих оттенков; в полотне «Улица в Тавризе» цвет играет более действенную роль: он в звучании красноватых, охристых плоскостей, в деталях, переданных синим и белым. Цвет здесь более подвижен в своем взаимодействии, однако он сохраняет приглушенность звучания, присущую технике темперного письма. В тавризских картинах проявилось и композиционное мастерство Коджояна: оно в решении пространства улицы и характере движения людей, объединенных единым действием, в передаче глубины интерьера и построении конфигурации зрительного поля с четырьмя фигурами, размещенными по краям двух пересекающихся осей.

